ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/18, 29.04.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Ալֆա Թրեյդ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-19/06» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարիքների համար բեռնատար մեքենաների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Դադարեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թիվ 2 արձանագրության 9.1 կետով կայացված որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

ք. Երևան

ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
Հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող.1

Բողոք բերող անձ՝
Տնօրեն Վաղինակ Իորդանյան
«ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, 2-րդ փող., տուն 28
Էլ. փոստ՝ alfa.trade01@mail.ru
Հեռ: +37491539542

Պատվիրատու՝ *ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ*
Հասցե՝ *ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Թբիլիսյան խճ. 2*

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ *ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-19/06*
Գնման ընթացակարգի առարկան՝
բեռնատար մեքենաների ձեռքբերում

ՍՏԱՆԱԼԻՔԻ ԵՎՈՒՐԱՍԻԱՅԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՈՒՏՔ N ՄՏ-19315-12
5 «29» 04 2019 թ.

ԲՈՂՈՔ

1. Բողոքի առարկան

Սույ թվականի ապրիլի 16-ին բեռնատար մեքենաների ձեռքբերման նպատակով ՀՀ բնապահպանության նախարարության «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ Պատվիրատու/ կողմից հայտարարվել է ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-19/06 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետ՝ Ընթացակարգ/, որի միակ մասնակից է հանդիսացել «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն /այսուհետ՝ Ընկերություն/: Ընթացակարգի հայտերի բացման նիստում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել Ընկերությանը հրավիրել գնի նվազեցման շուրջ բանակցությունների: Ընկերությունը համաձայն չէ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընդունված որոշման և գտնում է, որ այն հիմնավորված չէ:

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը

2"1" Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սույն թվականի ապրիլի 23-ին թիվ 2 արձանագրության 9.1 կետով որոշում է կայացրել Ընկերությանը սույն թվականի ապրիլի 29-ին՝ ժամը 11:00-ին հրավիրել գնի նվազեցման շուրջ բանակցությունների՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, որ սահմանում է, որ ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե առաջարկված նվազագույն գների հավասար են կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ

ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Տվյալ պարագայում առկա չէ վերը թվարկված հիմքերից և ոչ մեկը:

Ցանկանում ենք գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրության մեջ որևէ նշում չկա թե ինչ գին է եղել գնման հայտով սահմանված գնման առարկայի համար, մինչդեռ ՀՀ կառավարության 2017թ.-ի հունիսի 1-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի նույն 40-րդ կետի 1-ին ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի.

- «Գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:»: Նկարագրված դեպքում խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի նշյալ պահանջը, քանի որ Պատվիրատուի կողմից սույն թվականի ապրիլի 11-ին հաստատված գնումների պլանում /կցվում է/ Ընթացակարգի շրջանակներում գնվելիք բեռնատարների համար սահմանված արժեքը եղել է 8 000 000 ՀՀ դրամ մինչդեռ Ընկերության կողմից ներկայացվել է 7 800 000 ՀՀ դրամ գնային առաջարկ: Ակնհայտ է, որ Ընկերության կողմից ներկայացված գումարը չի գերազանցում Պատվիրատուի գնման պլանով նախատեսված ֆինանսական միջոցները:

3.Բողոքի պահանջը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասին 1-ին ենթակետը խնդրում եմ.

1. Դադարեցնել *ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-19/06 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի կողմից կայացված՝ N 2 արձանագրության 9"1-կետով կայացված որոշումը:*

Կից ներկայացնում եմ.

1. Տուրքի վճարման անդորրագիրը"

2. *ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-19/06* ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտարարությունը:

3" *ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-19/06* ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստերի N 2 արձանագրության պատճենը

4 Անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

Բողոքը ներկայացնող անձ՝

29.04.2019թ.